արդէն մեռած Դոլի արձանագրութիւնն է նորա բերանից (Ցաւել. Ա. 63ա)։ Իւանէն տալիս է եւ իրենց պետութեան սահմանները, «որ առ ի Կայենով եւ Կայծոնով մինչ ի Բարկուշատ եւ մինչ ի Ցակատա եւ մինչ ի Նախճաւան եւ անդի մինչ ի Կարս»։ Իրրև սահմանագլուխ, և զորանից առաջ Հաթերքի կամ Խաչենի միւս ճիւղի սեպհականութիւն էր(*)։ Ցիշուած երկիրներին տիրելուց յետոյ՝ Իւանէն գալիս է «ի սբ. ուխտս ի յԱյրիվանս եւ տեսի եկեղեցիքս եւ սրքս. ինձ անոշ(?) թուեցաւ, յիմ անուն ա-



Պատկեր 143.

Ըստ Վարդանի(*) Իւանէն ժառանգութիւն է ստանում Հաթերքը 1214 թուին. ճիշդ այդ ժամանակն էլ ստացած պիտի լինի Հաթերքին կից Ականայ բերդը, որ յիշատակուած է այս արձանագրութեան մէջ բարի զիմ յիշատակս ի վերադրեցի», նուիրելով Բերդաղ կոչուած վայրը, որ նոյնացնում ենք վանքի ազարակ Պորտիկ անուան հետ, քիչ դէպի արեւմուտք վանքից, որպէս լուսացու «սուրբ կաթուղիկէիս»։

(*) Էմինի հրատ. Մոսկուա, 1861, 184։

(*) Բարխ. Արցախ, 212։ Գանձ. Ղուկ. հրատ. 345։